

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին կ'ընդունուի 8 ՄԶԸ.  
Պատահա՞ց 10 ՄԶԸ.  
Վեցամսե՞ց 5 ՄԶԸ.  
Պատահա՞ց 3 ՄԶԸ.  
Ծանուցման տողը մէկ անգամի հաւասար 3 դուրուշի երկու անգամի հաւասար 2 դուրուշի անգամի երկու հաւասար զոտ սակարկութիւն կըլայ :



ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գալիս լրացող ճանրու ծախքը Խորագրութեան վրայ է :  
Լրացող փերաքերի առանկ կամ որ և ինչ գրութիւն Խորագիր — Տնօրէնին պիտի ուղղուի, Ղալալիս Սանարքըլար շատուսի թիւ 198, Նորո խոն, Մոսկուի գրասենեակը :  
Ճանրու ծախքը չվճարուած նաւակ չընդունուիր :

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒԴՈՒԹՅՈՒՆ 23 ՄԱՅԻՍ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ

Տերութեանց խորհրդոյ գումարման զրոյցները դարձեալ տարտամե մութ կերպարանք մը կառնունէ Տալիսին բնաւ բացորոշ զրոյց մը չկայ : Անտարաշխ կոմսն աստեղաբանելով յայտարարեց թէ անհամաձայնութիւնները բոլորովին վերջած չեն, և ծանոց թէ Աւստրո-Հունգարական շահերը պաշտպանելու համար տէրութիւնը զինուորական միջոցներ ձեռք կառնուի : Տերութեանց խորհրդոյ գումարման հրաւերները դեռ դնացած չեն, միայն թէ, կըսուի, նախապատրաստութիւններ կըլան :

Շուվալովի կոմսին պաշտօնին վրայ առնուած քանի մը տեղեկութիւններ ալ անոր կարեւորութիւնը կը չափաւորեն : Անգղիական լրագրերէն ոմանք գիտել կուտային թէ Լոնտոնի Ռուսական դեսպանը Բեդրսպուրկի մէջ բանակցելու իրաւունք չունէր, թէ ինք Ռուսիա դնացած էր իւր խնդրանքը Անգլիոյ կառավարութեան և ազգին տրամադրութեանց վրայ Չարլին տեղեկութիւններ տալու նըպատակաւ և ոչ թէ բանակցելու, որուն համար ոչ ոք իրեն պաշտօն տուած էր : Լոնտոն վերադարձած ժամանակ ալ Շուվալովի կոմսը Չարլին և Ռուսաց հասարակութեան տրամադրութեանց վրայ տեղեկութիւն բերած էր : Թայմը լրագրերը կըսէր թէ Անգլիան հաստատուն պիտի մնայ իւր պահանջման մէջ, որով կը խնդրէր որ տէրութեանց խորհուրդն Այսթէֆանոսի դաշնագրութիւնն ամբողջապէս քննելու իրաւունք ունենայ : Անգլիա այս սկզբունքը չկրնար թողուլ, առանց իւր բոլոր ընթացքը ծաղրելի ընելու : Սիւսլ է կարծել թէ Անգլիա քանի մը խնդիրներ ներկայացուցած է, զորս եթէ Ռուսիա ընդունի, ապա մեն բան կրնայ կարգադրել : Ստոյգ է որ եթէ Ռուսիա այսպիսի տրամադրութիւն մը ցուցնէ Անգլիոյ առաջարկութիւնները չմերժելու, մեծ գիւտարութիւն մ'անհետացած կըլինի : այսու ամենայնիւ հաշտութիւնը պահանջելու համար դրական և հաստատուն քայլ մ'այն ժամանակ կրնայ առնուիլ երբ Ռուսիա Եւրոպական տէրութեանց Արեւելեան խնդիրը ձեռն ձեռն հաստատութիւնը ճանչելով անոնց խորհուրդին մէջ մտնէ, այսինքն Այսթէֆանոսի դաշնագրութիւնն ամբողջապէս անոր քննութեան ենթարկէ :

Արդ՝ Ռուսիոյ մէջ թէ և ապնուականաց մէկ դասը Շուվալովի կոմսին արժանի դատած զիջմանց կը հաւատնի, այսու ամենայնիւ ազգային մասն և մանաւանդ համապատասխան մեծ

գիւտնեւորութեամբ կըտեսնէին որ իրենց այնչափ զոհողութիւններով ձեռք բերած արդիւնքը քննութեան ենթակայ պիտի լինի : Կըսուի թէ կայսեր նախագահութեան ներքեւ գումարւած խորհրդոյ մը մէջ, ուր զիջումներ ընելու որոշում արուած էր, կայսերազուն իշխաններէն մին (անշուշտ թագաժառանգը) գիւտնեւորութեամբ մեկնած էր : Մոսկուայի կաղէթն, որ ազգային և Սլավոն մասին բերանն է, Ռուսիոյ «խելահաս» կոչուած դատուն վրայ կը յարձակի, որուն կը վերաբերի Շուվալովի կոմսը : «Այս դատը, կըսէ, դատարարական է, լաւ կըլծուած, ընտիր զգեստներ կը հագնի, սպիտակ ձեռնոցներ կը դնէ, սակայն ինքզինքը կանգնուած, զեղծ, ապականեալ և հակառուսական է» :

Իբրեւ ի նշան ազգային պատուոյ պաշտպանութեան, թագաժառանգ Մեծ գումարին հովանոյն ներքեւ ըստորագրութիւն մը բացուցաւ կամաւոր տողով մը կտրուելու համար, որոյ պաշտօնը պիտի ըլլայ՝ եթէ պատերազմ ծագի : Անգլիոյ վաճառական նաւերը հալածելու փորձերը դաշնագրութիւնը ծովային տարածքներ արգելած է : Եւրոպիոյ միջազգային իրաւունքն յառաջդիմութիւն ըրած է և չներեր որ ներկայ ժամանակիս մէջ ծովերուն առաջնորդութիւնը խանգարի հենքերու ձեռքէ : Ռուսի Ռուսիա բոլորովին միջազգային իրաւանց համեմատ շարժելով, ծովային սպաներ և նաւատիրներ կը զրկէ յԱմերիկա՝ իւր դործակատարաց ձեռամբ դնուած չորհրդանշաններէն մէջ ծառայելու համար : Այս նպատակաւ թընթանութիւնը կը գրուին իշխալ նաւերուն մէջ, որք ըստ ամենայնի իբրեւ պատերազմական թիւն նաւեր կը պատրաստուին : Ստորագրութիւնը բացուելու համար հրատարակեալ յայտարարութիւնը խիստ ազգու կերպիւ շարագրուած էր : Կըսէր թէ Ռուսիոյ անողոր թշնամին այն է Անգլիա՝ նորէն պատերազմի սպառնալիք կընէ : անոր զօրութիւնը խիստ մեծ է ծովերու վրայ, բայց պէտք է որ Ռուսիա դոմնէ Անգլիոյ անհամար վաճառական նաւերն անհանգիստ ընէ : ասոր համար արագ ընթաց նաւատորմովի մը պէտք կայ, որ պէտք է ազգային ստորագրութեամբ պատրաստուի : Այս ստորագրութիւնն անմիջապէս բացուեցաւ թագաժառանգին պաշտօնը, և Ռուս գործակատարներն արդէն քանի մը չորհուրդներ դնելին Ամերիկայի մէջ, ուր Ռուսիա կը շտրուանակէ ոչ միայն չորհուրդ, այլ և թիւղանոթ և հրացան գնէ : Այսու ամենայնիւ կը կարծուի որ եթէ պատերազմ հրատարակի Անգլիոյ և Ռուսիոյ միջև, Ամերիկայի կառավարութիւնը զիջման կ'ընէ դաշնագրութիւնն յարգելով, իւր նաւահան

գիւտնեւորուն մէջ չեղարութեան հաւառակ դէպքերն ու գործերը պիտի արգելու : Յիշեալ դաշնագրութիւնն երեք սկզբունք հաստատած է. ըստ առաջինի՝ չեղոր տէրութիւն մ'ապնէ ջան ի գործ պիտի դնէ իւր իշխանութեան ներքեւ գումարւած տեղերն որ և է նաւու պատրաստութիւնն ու զինուորութիւնն արգելուր երբ որ իրաւացի պատճառներ կենան կարծելու թէ իրեն հետ հաշտ և բարեկամ գտնուող կառավարութեան մը դէմ պիտի գործածուի : Ըստ երկրորդին՝ չեղոր տէրութիւն մը թող չպիտի տայ պատերազմաց, որ իւր նաւահանգիստներն ու ջուրերը պատերազմական գործողութեանց կեդրոն ընեն թէ՛ ազգութիւնը և թէ զօրք առնելով : Ըստ երրորդին՝ չեղոր կառավարութիւնն իւր այս պարտականութիւնները գործադրելու համար ամեն ջան ի գործ պիտի դնէ :

Անգլիոյ հեղեկան զօրաբաժինը Մարթա հասաւ : Խորհրդարանին մէջ երկար վիճաբանութիւններ եղան չէ թէ այս զօրաց գործածուելուն՝ այլ առանց խորհրդարանին հաւանութեան գործածուելուն վրայ : Ընդգիւրդ մտաւ գլուխ Լորտ Հարթիսթընն առաջարկ մը ներկայացոյց, որով կը խնդրէր որ խորհրդարանն յայտարարէ թէ խաղաղութեան ժամանակ առանց խորհրդարանին հաւանութեան բնաւ չկրնար բանակ կազմուիլ կամ պատերազմական վիճակի մէջ պահուիլ, բայց ի նշուկապատին մէջ, ըստ տրամադրութեան Միւրիսի-Արթը օրէնքին : Իսկ Սըր Պիլ Բարեփոխութիւն մ'առաջարկեց ըսելով թէ ըստ որում խորհրդարանը ծախքը վաւերացնելու կամ մերժելու իրաւամբ կրնար զինուորական զօրութեան գործածութեան վրայ հսկել, անօգուտ և անպատեհ կըլլայ այսպիսի որոշում մը արուելով արտաքին գործոց ներկայ վիճակին մէջ կառավարութեան գիրքը տկարացընել : Այս վիճաբանութեանց առթիւ Լորտերուն խորհրդարանին մէջ Լորտ Պիլքոնսփիլա խօսք առնելով հաստատեց թէ թագուհին իրաւունք ունէր զօրաց նկատմամբ տրամադրութիւններ հրամայելու : հետեւաբար ըստ այս արտոնութեան՝ Հնդկական զօրաց առանց կանխաւ խորհրդարանին հաւանութիւնն հարցնելու եղած հրաւերն օրինաւոր էր, քանզի ստիպողականութիւն կար, և աւելցուց թէ կառավարութեան ընթացքը կրնար յաղթական կերպիւ պաշտպանել, բայց առկա բանակցութեանց պատճառաւ լուծութիւն պահելու պարտաւոր էր :

Լորտերուն ժողովարանին մէջ վիճաբանութեան վրայ լուծարութիւն չեղաւ : բայց երեսփոխանաց ժողովին

մէջ Լորտ Հարթիսթընի առաջարկութիւնը մեծամասնութեամբ մերժուեցաւ, 226 ղէմ 347 քուէ տրուելով : հետեւաբար ի նպատակ կառավարութեան 121 քուէի մեծամասնութիւն գոյացաւ, յորմէ կրնայ հասկցուիլ թէ նախարարաց գիրքը խիստ զօրաւոր է, քանզի խորհրդարանին և երկրին մեծամասնութիւնն անոր աշխարհափարութիւնը կը վաւերացնէ : Այսու ամենայնիւ Անգլիոյ մէջ խաղաղութիւնը պահպանելու մեծ փափագ մը կայ, և այս նպատակաւ երկու հարկեր հաղարէն աւելի ստորագրութեամբ հանրագիր մը պատրաստուած էր, զոր Անգլիոյ բարձր աշխուհաններէն Լորտ Վէսթմինսթըրի նախագահութեան ներքեւ պատուիրակութիւն մը կառավարութեան պիտի ներկայացնէ : Բայց արտաքին գործոց նախարար Լորտ Սալիսբըրի նախաձեռնեց առ Լորտ Վէսթմինսթըր ծանուցանելով թէ ներկայ տագնապալից պարագայներուն մէջ կառավարութիւնը չէր կրնար պատուիրակութիւնն ընդունիլ, և թէ պատուիրակութիւնը խորհրդարանին պէտք է դիմէ :

Վերջին թղթերով եկած Եւրոպական լրագրաց մէջ հետեւեալ լուրերը կը կարդանք :

Պէրլին 27 մայիս :  
Հաւանական կերեւի վերջապէս թէ տէրութեանց երեսփոխաններն ուրիշ բանի համար չպիտի գումարին, բայց եթէ կիսով չափ կատարուած գործ մ'աւարտելու համար, և թէ քանի մ'օր բաւական պիտի ըլլայ : Ընդհանուր կարծիքն այս է թէ Չարլին անկեղծ խաղաղասիրութիւնն և Գերմանիոյ դաշնակցական իշխանին բարեկամական միջնորդութիւնը վերջապէս մեծ զիջումներ ընելու պարտաւորեցին զԱնգլիա :

Մոսկուայի կաղէթ լրագրերը կը ծանուցանէ թէ Մոսկուա բնակեալ Հայոց ընկերութիւնը կոչուելու մը պիտի տայ ի պատիւ Տէր Ղուկասի զօրապետին, երբոր Բեդրսպուրկէն կովկաս վերադարձած ժամանակ Մոսկուայէն անցնի :

### ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Վիեննա 31 մայիս իրիկուն :  
Աստրիական պատուիրակութեան յանձնաժողովին մէջ այս իրիկուն Անտրաշխ կոմսը նոր բացառութիւններ տրուաւ : «Անգլիոյ և Ռուսիոյ միջև եղած կարգադրութեան վրայ Անգլիական կողմը լրացրին հետադիւր ծիծաղելու, ըստ, ուստի և ալ Ռուսիան խորհրդոյ վերաբերեալ գիտարկութիւնը հարկութեամբ կը թընէին : Գերմանիա, յաւելցուց կոմսը, բոլորովին իւր պարկեշտ միջնորդ վարուեցաւ, և Աւստրիա իւր շահերը տէ-



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՐԵՆՈՒՅՈՒՄ

ԱՅՏ. ՎԱՐԶ. ԵԼԵԻՄՍԻՅ ՀՈԳԱՐԱՐԶ.

Ազգ. Կեդրոնական Ընդհանուր Թորոց Հաւաքման Համար Երկրորդ Հոգաբարձութիւնը քանի մ'երաշխաւորեալ հաւաքչի պէտք ունի:

Սոյն պաշտօնը յանձն առնելու հետամուտ անձինք կը հրաւիրուին երեքշաբթի և ուրբաթ օրերը 'ի Պատրիարքարան Երկրորդ Հոգաբարձութեան ներկայանալ:

22 մայիս 1878 (կնէ+) 'ի Պատրիարքարան Հայոց Կ. Պոլիս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԵՂԵՑԻԿՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԻ

ԽՕՍԵՅԵԱԼ

Ի Լ. Կարան Ընկերացութեան Օրէնքներէ

1878 ՄԱՅԻՍ 24

Ա.

Տիկնայք և Տեարք. ինչ որ այլ անհնար չէր ընդհանրացաւ, մարդն ամեն քանի յառաջ մի հոգի է. յինքնան ինքնայն կեանքն ստորագրեալ է հոգեւոր կեանքին, և զորքարանք հոգեւոր կեանքն արտայայտութեան մի միջոցն ու գործին են: Ստուգելու մի խորհրդաւոր և սերտ հանգոյցն ու ժողովն և կեանքային կողմէն է ոգին և նիւթն մարդոյն մէջ, բայց մարդն կ'ըզայ ինքնան ուրոյն և աւանդինն այս կրկնակի կեանքն. գործընդ կրկնակի կեանքն 'ի նմա, որք իւրեանց առանձին պէտքերն, սնունդն, հաճոյքն և ցաւերն ունին, առնչակից միմեանց հետ, բայց տարբեր յերեւոյց և երբեմն իսկ ընդդիմութեամբ: Ո՞վ կը խորհի թէ կողմն ու տեղը, ննջելը, հագուելը, զգալու քանոց պիտոյքն գոհացնելու համար այս ամենն յանուշա կարեւոր է ազդելու համար, բայց կեանքն նպատակ կը չէ, նորա պայմանն է անհրաժեշտը այս աշխարհի մէջ, և ո՞վ չէ ունեցած այնպիսի վայրկեաններ ուր, նիւթն իւր անողք և տաղտուկ պահանջներով խոչընդոտն տեսնելով իւր հոգեկան կեանքի ամենէն ազդելու վայրկեանը և ձգտումներուն, չէ՞ փափաքած մի ոգի, մի իմացականութիւն լինելու ու անհրաժեշտ, զերծ մարմնից կողմէն, և խորհիլ միայն և միշտ, զգալ միայն և միշտ. . . .

Ամեն ոք կը մեղանայր յօժարակամ այս պատեանն զոր մարմին կանուանեմք, և որ լին ակարողութիւններով, գէշութիւններով, անտեղի, ընդերկրաքարք և յամուտ տեսչերով, եթէ աշխարհի վերայ մարմնայ և հոգեւոր բնականութիւնն մի օրէնք չլինէր հարկադրուած մեր վերայ մի գերազանց իմացականութիւնէ, և եթէ մարմնայ կեանքն կարեւոր չլինէր հոգեւոր կեանքին — գէթ մի ժամանակի համար, քանզի մարդն բնազդաւմ ունի մի անդադրեցիկ գիտական գոյութեան, ուր հոգին պիտի ապրի իւր յատուկ կեանքով, ազատ, երկրանի իւր զգեցիկ ձերբադատ, տեսնելով անբող զճարտարութիւն և սիրելով զգեցիկներն աննշանակ: Ամեն ուրեք բնութեան մէջ զօրութիւնն կապուած կը տեսնեմք նիւթոյն հետ, բայց նիւթն չէ զօրութիւնն: Աստուած կեանք զրած է յամենայնի, և նիւթոյն ձևոյն տակ բացատրած իւր կարողութիւններէն և խորհուրդներէն մին. նիւթն մի ձև է միայն, յայտարար և նշանակ մի զօրութեան, մի գաղափարի զոր Աստուած ուզած է զննել 'ի նմա, Հանքերէն սկսեալ մինչև ցմարքն, ամեն ձևոյ տակ մի

զօրութիւն, մի օրէնք, մի կեանք կայ ծածկեալ որ ձևն չէ, բայց այնու կը յայտնուի մեղ. ո՞վ չօշափեց զօրութիւնն, ո՞վ հոտոտեց օրէնքն, ո՞վ տեսաւ կեանքն գոյն: Բայց մի քանի գերական և աստուածային օրէնք կայ, այն է յառաջ իմութիւն: Յաւանականութիւնն ուղիւ է այս օրէնքն նշանակել իւր գործոյն մէջ, և անհատար կերպիւր ու տարածանաբար իւր ոգին սիրած է բնութեան վերայ, կազմած է նա իւր ձեւակերտքն: Ներմութիւնն ու հիւլէական ձգողութիւնն անշուշտ մարմնայ վերայ կեանք կը լինի բնութեան մէջ, շարժումն զգալութիւն և բնազդաւմանք անանոց վերայ, և խորհուրդ, զգացումն և կամք մարդկային էակին վերայ: Մարդն ամեն բանէ տաւի կը բացատրէ զԱստուած, ամեն բանէ տաւի կը զրոյցէ գերազանց իմացականութիւնն. աւելի մեծ է ի նմա աստուածային տարրն, անհրաժեշտ և տաւի բարձրագոյն, աւելի երկնային. իմացական և ազատ էակ մի է նա, իւր Արարչին պատկերն ու յաշակի ևս կը կրէ յինքնան. 'ի մի բան, նա մի հոգի է գիտակից ինքնան, կարող ճշմարտին ծանօթութեան, բացարձակին և անհոգիին ըմբռնման, գեղեցիկին սիրոյն և առաքինութեան: Էւ այս է որ կարող է զինքն այլ կեանքանիւնքէ և արարչութեան ստեղծելու վերայ մի գերազանց տառիման կը նշանակէ նմա: Մարդն զրոյցութիւն Աստուծոյ հետ միանոց վերին օղակն է:

Ըսի աղբէն. մարդոյն կեանքն հոգեկան է մարմնային. իւր կեանքն էական երկնայինն են խորհուրդ, զգացումն ու կամք, այսինքն ինչ որ կայ ամենէն տաւի անհրաժեշտութեան, սէր և ատելութիւն, ուրախութիւն և վիշտ, յօժարութիւն և դժկամութիւն, ահա՛ տարիքն իւր հոգեկան գոյութեան: Ճշմարտն, այս է իւր մտայն աշխուսեցոյն սնունդն. գեղեցիկն, այս է իւր սրտի սիրելիքն հաճոյքն. բարին, այս է իւր կամայն գերազանց տառակայն: Այս, ստեղծուած է ճշմարտն ճանչելու, գեղեցիկն վայելելու և բարին գործելու համար, և այս միջոցներով ձգտելու անդու 'ի կատարելութիւն որ նպատակն է իւր կեանքին, զի յառաջ իմութեան օրէնքն կը շարունակէ մարդոյն մէջ, և մարդն մի կատարելագործելի էակ է: Ոգի 'ի մարմնի, հարկ է իւրեան թափանցել ոգեւոյն՝ որ կայ ամեն ձևոյ տակ. քահանայ բընութեան, ընթերցում ճգամբ արարչութեան մատենին մէջ Արարչին գաղափարն, և տակաւ բարձրանալ ընդդէմ իւր իմացականութեան հարկէն, իւր կեանքի շրջանակն, և գաղափարէ 'ի գաղափար, ճշմարտութեան 'ի ճշմարտութիւն տառանի վերանալ, ո՞ր իտէ յո՞ հասնելու համար, զի չկարեւոր հեռաւորեալ այն նպատակն վսեմ, զոր աստուածային մասնն սահմանած է բարոյական աշխարհի սոյն մշտնջենական շարժման:

Աստ իմ՝ նպատակն 'ի պայքար մանկ չէ ամեն գարաց Եպիկուրոսներու մահարոյր վարդապետութեան գէթ. բայց հարկ էր տեսլ զայս ամենայն, Տիկնայք և Տեարք,

\* Այս քննարկումն այսպէս գոյաւորուեցաւ Երեւանի հայկա-կան իմէ՛ դպրոցի և իմէ՛ Թատրոնի հոգեւոր ղեկավարութեան խոստովանութեան հիմունքով և արտաբերութեան մէջ, զոր կը ցատիք որ այն իմաստակց բանաստեղծութեան հեղինակին պէս հանձարեղ գրողն է մ'ալ ընդունելով այսպէս յաճախ կը գործածէ: Ման. Խմբ.

անցնելէ յառաջ իմ'նիւթոյն, զի գերեցիկն հասկանալոյ համար հարկ է հասկանալ հոգին, և նոյն համար որք ոչինչ կը ճանչեն անգը քան ըզնիւթն չիք գեղեցիկ՝ այլ միայն հաճոյք զգալական, ինչպէս չիք բարի՝ այլ միայն շահ, ինչպէս չիք բան՝ այլ միայն փորձ, ինչպէս չիք Աստուած՝ այլ միայն գիտութեան կոյր և անդիմապիկ:

Բ.

Ինչ է գեղեցիկն. — Հարցումն տարօրինակ, գոգոյս. զի ամեն օր, ամեն վայրկեան 'ի տեսիլ կամ 'ի լուր մի առարկայի որ կը յուզէ զմեզ կամ կը յափշտակէ՝ կը գոչեմք « զի՛ գեղեցիկ »: Գեղեցիկն, ո՞վ չզգայ զայն, երբ տեսնէ մի կոյս նրբահասակ՝ ու կեհեր և աստղաբեր, մի պատանեկան գէթ կայտառ զոր կը շրջանակէն սեւա գտնուրք և կը լուսաւորեն հանճարալիւր աշխուշ, մի մանկիկ՝ մօր բնոյն վերայ բուսած ծաղիկ, կամ մի աղքատ դեռուկ վեհագոյն. երբ տեսնէ մի գեղարար նոյն օգտաւոր, կամ լսէ մի թռչունոյ երգն յանտառին, կամ դիտէ խաչինքն ճարակաւոր ընդ մարդերի նկատէ ծաղկեհիւս պատմութեան զոր կը գեղեցիկ գարուն՝ դիտոյն բոյրերու և շողերու, կամ անտառն՝ որոյ ստուերք են խորհրդաւոր, և առեւակն արծաթի՝ յոր կը կախին լուսնոյ վարդն ոսկեթել, և կամ երբ ձոռ վերջապետ մէջէ կընային տխուր իւր գեղեցիկ տեսիլներուն որ կը թափանչեն տակաւ իւր ստից տակ և որք թափն լինել իւր յոյսքն և երազը վաղանցիկ: Ո՞վ չզգայ գեղեցիկն, երբ կը տեսնէ հաւատացեալ 'ի ծուկն սրբափայլին նուիրական սեմոյ վերայ, մի մօր խանդաղ ստանքն իւր գաւազին վերայ որ կախուլ է տալիքէն, տարփանքն երկուց տարիանաւոյ որք գոգոյս յիւրեար միայն ապրին, եռանդն զինւորին որ զուարթ կը նստի իւր կեանքն հաղթանակ արեւուն, այսինքն որ ամէկտեղ ու գաղափարով կը նետէ լուսնայն գանձանակին մէջ կամ թէ մի մանուկ որ մի պատմութեան հոգ կը կարկառէ մարդիկ ծերոյն որ կ'օրհնէ զնա, Գեղեցիկն, ո՞վ չզգայ զայն, երբ մի վեհ ճշմարտութիւն, իբրեւ լուսնոյ ճառագայթ, կուգայ յանկարծ, մեր մաքի քօշն պատուելով, մի անձանօթ հորիզոն պարզել մեր առջև, կարգաւ տալ մեզ բնութեան գաղտնիքն, թափանցել արարչութեան ներգաղանալութեան և լուծել իմաստն մի այլ տառի 'ի տառիցն որովք Աստուած իւր կամքն ու իմաստութիւնն գրել է 'ի տիեզերս:

Այս ամենն գեղեցիկն է, զի այսպէս կ'առեւ մարդկային բանականութիւնն և այսպէս կ'զգայ սիրան որ կը յուզէ, կը գործել, կը խանդաղատի, սիրով և զմայլմամբ կը համակի այս առարկայից 'ի տեսիլ կամ 'ի լուր:

Բայց մի բարձրագոյն աստիճան կայ գեղեցիկն որ մի մեղմամբ և աշխատանք հիացումն կազդէ հոգեւոյն, որ իւր մեծութեան և բարձրութեան ներքե կը կրկնէ կը պակուցանէ զմարդկային միայն և անհոգիին գաղափարով զոր սովորէ զորութեանն կը վերայնէ կապչէ զհոգին, և զոր մարդկային լեզուէ կանուանէ մի այլ անունով, այն է Հեթ: Վսեմ են Մատիւ, Կովկաս, Էյփէնդ, Ալպ, Հիմալայա իւրեանց յաւիտեանական անդեղամալի խորհուրդ, ամբողջ և ամբողջապէս գոտիով, և երկնածրոյր գաղափարով որոյ վերայ կը կրեն գոգոյսն եթերայ գեթ:

Եթե լայնածիր՝ իբրեւ սինք հսկայածէք այն անհուն տաճարին զոր աշխարհ կը կոչեմք: Վսեմ է ծով ծայրածաւայ, անեղրութիւն տարածեալ մի այլ վսեմ անեղրութեան տակ որ իւրեան նման իւր անդունդքն ունի և կոհակներն. ովկէան և երկին, երկու խորութիւնք, երկու անձանօթք. միայն կը մոլորի կը ցնորի ապշեալ՝ երբ միայն ամպոց և միւսոյն ալեաց մէջ կը թափառի՝ հոծ ու խիտ իբրեւ մի անհուն ճակատու կընձիւք որ խոհեր կը ծրարեն:

Վսեմ է գիշեր իւր մթութեան վերարկուով, աստեղաց պսակով և լուին ու խորհրդաւոր ժամերով զոր կը գլորէ, լուրջ ու ծանր, իբրեւ համբիւր մի հատեր, վսեմ է Սոկրատ՝ երբ իւր գերեզմանին եղբն նստած՝ մահուան բաժանի 'ի ձեռնին՝ ժամագին կիմաստաւորէ զանմահութենէ հոգեւոր. վսեմ է կատին որ կը մեռնի ազատութեան վերայ չապրելոյ համար. վսեմ է Ժան Դ'Արք իւր խաւովին բոցերուն մէջէն՝ փայտեայ խաչն 'ի ձեռնին և Գաղղիոյ անունն 'ի շրթանն. վսեմ են մարտիրոսք իւրեանց կոսկարայից վերայ. վսեմ է Գրիգոր 'ի Գողգոթայի ուր կը մեռնէր մարդոց փրկութեան համար և կը ներէր իւր թշնամեաց: Վսեմ է Գրիգորանէութիւն որ կուսուցանէ սէր փառսիրտն տառալիւթեան և օրհնիք անիմից. վսեմ է գուլթ երբ մի բողոքածաւայ հրեհէն մէջ կը նետուի դուրս բերելոյ համար անտի՛ կենաց վտանգով՝ մի մանկան օրորոց զոր բոցք խանձրած են կիտով: Վսեմ է կալիքնոսներու, Նիւթըններու, Գեթլէններու գիտութիւնն երբ ցոյց կուտայ մեզ միջոցն անտահման ոգեւորեալ մի մշտնջենական և անհատաւորով, որոյ շրջանք և մանուածք են անվերջ, յորում աշխարհներ աշխարհներու շարքիւր ամբողջով կը գառնան այլ աշխարհաց՝ արեգակնայն շուրջն, որք նոյնպէս բոլոր այս արեգականց գունդով հիւսկուգան այլոց շուրջն, և այս անեղրութիւնն աշխարհաց կը պարէ գաղանակաւոր շուրջ մի կերպոնն, մի զօրութեան, մի ոգեւոր որ կը կենսաւորէ այս մեծ ամբողջն և որոյ լոկ գաղափարին առջև կը չքանայ մարդոյ միայն երբ իւր շրթանք կը թոթովեն գողգոթային զանունն Աստուած. . . .

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Մարտի 1878 թ. Երեւան

Ե.Ր.Դ.

Եթե լայնածիր՝ իբրեւ սինք հսկայածէք այն անհուն տաճարին զոր աշխարհ կը կոչեմք: Վսեմ է ծով ծայրածաւայ, անեղրութիւն տարածեալ մի այլ վսեմ անեղրութեան տակ որ իւրեան նման իւր անդունդքն ունի և կոհակներն. ովկէան և երկին, երկու խորութիւնք, երկու անձանօթք. միայն կը մոլորի կը ցնորի ապշեալ՝ երբ միայն ամպոց և միւսոյն ալեաց մէջ կը թափառի՝ հոծ ու խիտ իբրեւ մի անհուն ճակատու կընձիւք որ խոհեր կը ծրարեն:

Վսեմ է գիշեր իւր մթութեան վերարկուով, աստեղաց պսակով և լուին ու խորհրդաւոր ժամերով զոր կը գլորէ, լուրջ ու ծանր, իբրեւ համբիւր մի հատեր, վսեմ է Սոկրատ՝ երբ իւր գերեզմանին եղբն նստած՝ մահուան բաժանի 'ի ձեռնին՝ ժամագին կիմաստաւորէ զանմահութենէ հոգեւոր. վսեմ է կատին որ կը մեռնի ազատութեան վերայ չապրելոյ համար. վսեմ է Ժան Դ'Արք իւր խաւովին բոցերուն մէջէն՝ փայտեայ խաչն 'ի ձեռնին և Գաղղիոյ անունն 'ի շրթանն. վսեմ են մարտիրոսք իւրեանց կոսկարայից վերայ. վսեմ է Գրիգոր 'ի Գողգոթայի ուր կը մեռնէր մարդոց փրկութեան համար և կը ներէր իւր թշնամեաց: Վսեմ է Գրիգորանէութիւն որ կուսուցանէ սէր փառսիրտն տառալիւթեան և օրհնիք անիմից. վսեմ է գուլթ երբ մի բողոքածաւայ հրեհէն մէջ կը նետուի դուրս բերելոյ համար անտի՛ կենաց վտանգով՝ մի մանկան օրորոց զոր բոցք խանձրած են կիտով: Վսեմ է կալիքնոսներու, Նիւթըններու, Գեթլէններու գիտութիւնն երբ ցոյց կուտայ մեզ միջոցն անտահման ոգեւորեալ մի մշտնջենական և անհատաւորով, որոյ շրջանք և մանուածք են անվերջ, յորում աշխարհներ աշխարհներու շարքիւր ամբողջով կը գառնան այլ աշխարհաց՝ արեգակնայն շուրջն, որք նոյնպէս բոլոր այս արեգականց գունդով հիւսկուգան այլոց շուրջն, և այս անեղրութիւնն աշխարհաց կը պարէ գաղանակաւոր շուրջ մի կերպոնն, մի զօրութեան, մի ոգեւոր որ կը կենսաւորէ այս մեծ ամբողջն և որոյ լոկ գաղափարին առջև կը չքանայ մարդոյ միայն երբ իւր շրթանք կը թոթովեն գողգոթային զանունն Աստուած. . . .

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Մարտի 1878 թ. Երեւան

Ա.Ղ.Դ.

Հայերէն և Գաղղիերէն լեզուաց հմուտ և փորձ անձ մը պատրաստ է ազգային վարժարանաց մէջ այցելութեամբ կամ մնայուն կերպիւր դասատուութիւն ընելու:

Պէտք ունեցողք կրնան լրագրոյս խմբագիր—Տնօրէնին հետ խօսիլ:

U.S. DEPT. OF COMMERCE